ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Խաչատուր Մկրտչյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Անի Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Արմավիրի մարզում առկա մի շարք հրատապ և ընթացիկ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում 2024 թվականի չորրորդ եռամսյակում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքների ընթացքի վերաբերյալ

/ Գոռ Հովհաննիսյան– Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,
Լիաննա Հարությունյան-
Իրավաբանական բաժնի պետ/

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային

կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը և իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը, ովքեր նշեցին, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2530-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2024 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի N ՄՈ/491-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում 2024 թվականի չորրորդ եռամսյակում իրականացվում է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և լրացված հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում (մինչև ընթացիկ շաբաթվա ավարտը) կներկայացվեն ինչպես ՀՀ Արմավիրի մարզպետին, այնպես էլ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ու կհրապարակվեն ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝ http://armavir.mtad.am/:

Ներկայացված տեղեկատվությամբ միաժամանակ նշվեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի փետրվարի 7-ի N ՄՈ/74-Ա և ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի մայիսի 10-ի N ՄՈ/210-Ա որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերի կողմից իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներ են իրականացվել համապատասխանաբար Բաղրամյան (առաջին եռամսյակ) և Փարաքար (երկրորդ եռամսյակ) համայնքներում: Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումներ և թերություններ են հայտնաբերվել ինչպես Բաղրամյան, այնպես էլ Փարաքար համայնքներում: Արձանագրված խախտումների և թերությունների վերացման ժամկետներ են սահմանված եղել, սակայն մինչև օրս նշված համայնքապետարանների կողմից դրանք չեն վերացվել: Ի դեպ, ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններով տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որտեղից սահմանված ժամկետներում դեռևս արձանագրված խախտումներն ու թերությունները չեն վերացվել:

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին և Իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանին՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված ժամկետներում արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով

համագործակցված աշխատանքներ տանել Բաղրամյան և Փարաքար համայնքների ղեկավարության հետ և սահմանված ընթացակարգով արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հարց 2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2024 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության մասին Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տարեկան ամփոփիչ հաշվետվության նախապատրաստական աշխատանքների մասին

/Արամ Հովհաննիսյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար/

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը, ով ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տարեկան ամփոփիչ հաշվետվության նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Նա մասնավորապես նշեց, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.11.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների պահանջները, ՀՀ Արմավիրի մարզպետի տարեկան ամփոփիչ հաշվետվության նախապատրաստման նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի կողմից արդեն համապատասխան հանձնարարություն է տրվել մարզպետի աշխատակազմի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ նախապատրաստել, ամփոփել և յուրաքանչյուրն իր մասով 10-օրյա ժամկետում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հիմնական բնագավառներում կատարված աշխատանքների, ինչպես նաև մարզի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության հաստատված ծրագրի 2024 թվականի ամիսների կտրվածքով միջոցառումների հետ կապված, որպես համակատարող մարզպետի աշխատակազմին վերաբերելի ուղղությունների հիմքում դրված խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների կատարման ընթացքի, արդյունքների և կանոնադրական ոլորտային գործառույթների կատարողականի վերաբերյալ հաշվետվություններ՝ համառոտ նշելով աշխատանքների կատարման ընթացքում առաջացած խնդիրները և դրանց լուծման ուղղությունները: Հանձնարարականի կատարման արդյունավետությունն ապահովելու համար, մինչև քննարկվող ժամանաշրջանում աշխատանքների վերջնական արդյունքների ամփոփումը, համապատասխան ոլորտները համակարգող մարզպետի տեղակալի և աշխատակազմի գլխավոր քարտուղարի մոտ կկազմակերպվեն նախնական քննարկումներ ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների 5-ամյա ծրագրից բխող 2024

թվականի ընթացքում կատարված աշխատանքների և կանոնադրական գործառույթների վերաբերյալ: Քննարկման վերջնական արդյունքներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կողմից կազմված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2024 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության մասին Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տարեկան ամփոփիչ հաշվետվության նախագիծը կներկայացվի մարզպետի քննարկմանը:

Ներկայացված տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունվեց ի գիտություն:

Հարց 3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ամառային և ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքների իրականացման վիճակի գնահատման վերաբերյալ

/ Խաչատուր Մկրտչյան- Հ Հ Արմավիրի մարզպետի տեղակալ,
Դավիթ Ավետիսյան- Հ Հ Արմավիրի մարզպետի Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ/

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Խաչատուր Մկրտչյանը և աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը, ովքեր նշեցին, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ինչպես միջպետական, հանրապետական, այնպես էլ մարզային և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն իրականացվում են մրցույթներ շահած տարբեր կազմակերպությունների կողմից, որոնց կատարած աշխատանքների նկատմամբ մշտադիտարկումների միջոցով իրականացվում է անհրաժեշտ հսկողություն: Ավելին, ինչպես միջպետական և հանրապետական, այնպես էլ մարզային և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման արդյունքում կազմված համապատասխան տեղեկանքները ներկայացվում են ինչպես Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհաշինության ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովող «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ: Նշվեց նաև, որ հինգ տարի ժամկետով կնքված պայմանագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանությունն իրականացնող կազմակերպություններն ապահովված են համապատասխան տեխնիկայով ու սարքավորումներով և ներկայումս կուտակված է բավարար քանակությամբ աղ ու ավազ ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներն սահմանված նորմատիվներին

համապատասխան արդյունավետ կազմակերպելու համար: Միաժամանակ նշվեց,որ ներկայումս Արմավիրի մարզում բոլոր ճանապարհներն անցանելի են:

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Խաչատուր Մկրտչյանին և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանին՝ ուժեղացնել հսկողությունը ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքների նկատմամբ և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի լիազորությունների շրջանակներում վճարումները կատարել բացառապես նորմատիվներով սահմանված համապատասխան ծավալների և որակյալ աշխատանքների առկայության դեպքում:

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների շենք-շինությունների տեխնիկական վիճակի, ազգաբնակչությանը առողջապահական հիմնարկների կողմից իրականացվող համապատասխան ծառայությունների մատուցման գնացուցակների և հաստիքացուցակների հաստատման, առողջապահական հիմնարկներում իրականացված աուդիտորական հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից չօգտագործված ֆինանսական միջոցների հետ վերադարձման գործընթացի վերաբերյալ

/Արգիշտի Մեխակյան-ՀՀ Արմավիրի մարզպետ /

Օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը դիտարկելով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանի, իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանի և ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Արայիկ Հակոբյանի կողմից ներկայացված հակիրճ տեղեկատվությունները, մասնավորապես նշեց, որ՝

ա/ դեռևս վերջնական ու հստակ տեղեկատվություն չկա մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հարակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմարկների շենք-շինությունների տեխնիկական իրական վիճակի (տեխնիկական անձնարերի) վերաբերյալ, որի բացակայությունը հաճախ խոչընդոտ է

հանդիսանում սեղմ ժամկետում կոնկրետ շենք-շինությունների վերանորոգման, հիմնանորոգման կամ նորի կառուցման աշխատանքների համապատասխան ընթացակարգով կազմակերպմանը,

բ/ բովանդակային առումով դեռևս հստակ չէ նաև մարզային ենթակայության առողջապահական հիմարկների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման գնացուցակների և հաստիքացուցակների կազմման ու մարզպետի հաստատմանը ներկայացնելու ժամկետների մեթոդաբանությունը, որը հաճախ ազգաբնակչության շրջանում որոշակի դժգոհությունների առիթ է հանդիսանում,

գ/ անհրաժեշտ է ուսումնասիրել մարզային ենթակայության առողջապահական հիմնարկներում վարձակալությամբ տրված տարածքների օրինականությունը և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին,

դ/ անհրաժեշտ է մինչև տարեվերջ մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների նախահաշիվները ներկայացնել հաստատման,

ե/ անընդունելի է մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների կողմից դեռևս չօգտագործված ֆինանսական միջոցների (ընդհանուր ծավալով 799 մլն դրամ) պետական բյուջե հետ վերադարձման նպատակով որոշումների կայացման ուշացումները, քանի որ չօգտագործված ֆինանսական միջոցները պետական բյուջե չվերադարձնելու դեպքում հաջորդ տարի տվյալ ուսումնական հաստատությունը համապատասխան ֆինանսավորում չի ստանա,

զ/ անհրաժեշտ է սեղմ ժամկետում մարզպետի մոտ քննարկման ներկայացնել առողջապահական հիմնարկներում իրականացված աուդիտորական վերջանական հաշվետվությունները, իրավիճակի վերաբերյալ հստակ տեղեկատվություն ունենալու և օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Հանձնարարական՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանին և ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Արայիկ Հակոբյանին՝ վերը նշված դիտարկումների վերաբերյալ քննարկում ծավալել մարզպետի խորհրդական

Բարսեղ Նիկողոսյանի հետ և արդյունքները համատեղ ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

Հարց 5. 2024 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ

/Անդրանիկ Լալայան–ՀՀ Արմավիրի
մարզպետի աշխատակազմի զորահավաքային
նախապատրաստության բաժնի պետ/

Օրակարգային հինգերորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանը, ով տեղեկացրեց, որ 2024 թվականի ձմեռային զորակոչի նախապատրաստական աշխատանքներն ընթանում են Հայաստանի Հանրապետության կառավարություն 21 նոյեմբերի 2024 թվականի <<Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու եվ զորացրում կատարելու մասին>> N 1832-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Ներկայացված տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունվեց ի գիտություն:

Օրակարգային հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2024-12-20 12:54:28 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝Դավիթ Դավթյան